Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
նախագահի 2015 թվականի նոյեմբերի 11-ի
թիվ ՆՈ-045-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎՈ ՄԵԴԱԼՈՎ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎՈԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) պատվո մեդալով (այսուհետ՝ Պատվո մեդալ) և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվոգրով (այսուհետ՝ Պատվոգիր) պարգևատրման կարգը:

2. Պատվո մեդալով և Պատվոգրով պարգևատրում է Ազգային ժողովի նախագահը:

3. Պատվո մեդալով և Պատվոգրով կարող են պարգևատրվել Հայաստանի Հանրապետության ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օտարերկրյա հյուրերը՝ օրինաստեղծ գործունեության, ժողովրդավարության զարգացման, միջխորհրդարանական բարեկամական կապերի ամրապնդման և այլ բնագավառներում ներդրած ավանդի և մատուցած ծառայությունների համար:

4. Պատվո մեդալով պարգևատրում իրականացվում է Ազգային ժողովի նախագահի կարգադրության հիման վրա՝ սեփական նախաձեռնությամբ կամ Ազգային ժողովի նախագահի տեղակալի, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի կամ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի միջնորդությամբ:

5. Պատվո մեդալով և Պատվոգրով պարգևատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին:

6. Պարգևատրման միջնորդությանը կից Ազգային ժողովի նախագահին են ներկայացվում պարգևատրվող անձի կենսագրական տվյալները, անձնական բնութագիրը և պարգևատրման հիմքը:

7. Պարգևատրման մասին միջնորդությունը հիմնավոր համարելով՝ Ազգային ժողովի նախագահը, միջնորդությունը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, այն, կից փաստաթղթերի հետ միասին, ուղարկում է Ազգային ժողովի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (այսուհետ՝ Անձնակազմի կառավարման վարչություն)՝ հանձնարարելով պատրաստել Ազգային ժողովի նախագահի կարգադրության նախագիծ: Նշված ժամկետում համապատասխան հանձնարարական չուղարկելը համարվում է միջնորդության մերժում:

8. Պարգևատրման գործընթացի կազմակերպման համար պատասխանատու է Ազգային ժողովի աշխատակազմի արարողակարգի վարչությունը:

9. Պատվո մեդալը և Պատվոգիրը հանձնում է Ազգային ժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ համապատասխան պաշտոնատար անձը՝ հանդիսավոր պայմաններում:

10. Պատվո մեդալով կրկնակի պարգևատրում չի իրականացվում:

11. Պարգևատրված անձանց կողմից Պատվո մեդալը և(կամ) դրա վկայագիրը կամ Պատվոգիրը կորցնելու դեպքում դրանց նկատմամբ իրավունքները պահպանվում են:

12. Պատվո մեդալի կորստի կամ վնասման դեպքում կրկնօրինակ չի տրվում, բացառությամբ, եթե այն կորել կամ վնասվել է մարտական պայմաններում, արտակարգ իրավիճակների հետևանքով կամ այլ հանգամանքներում, երբ մեդալը պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու հնարավորություն չի եղել:

13. Պատվո մեդալի և (կամ) դրա վկայագրի կամ Պատվոգրի կորստի կամ վնասման դեպքում դրանց կրկնօրինակները ստանալու համար գրավոր դիմում է ներկայացվում Ազգային ժողովի աշխատակազմ: Պատվո մեդալի կորստի կամ վնասման դեպքում կրկնօրինակն ստանալու դիմումին կցվում են նաև ապացույցներ առ այն, որ այն կորել կամ վնասվել է մարտական պայմաններում, արտակարգ իրավիճակների հետևանքով կամ այլ հանգամանքներում, երբ մեդալը պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու հնարավորություն չի եղել:

14. Պատվո մեդալի և (կամ) դրա վկայագրի կամ Պատվոգրի կրկնօրինակները տրվում են համապատասխան դիմումը ներկայացվելուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

15. Պատվո մեդալի և (կամ) դրա վկայագրի կամ Պատվոգրի կրկնօրինակները պարգևատրված անձանց հանձնում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը:

16. Պատվո մեդալով և Պատվոգրով պարգևատրված անձանց գրանցումն ու հաշվառումն իրականացնում է Անձնակազմի կառավարման վարչությունը, որն այդ նպատակով վարում է հատուկ գրանցամատյան:

17. Գրանցամատյանում նշվում են պարգևատրված անձի անուն-ազգանունը, պարգևատրման հիմքը, համապատասխան կարգադրության ընդունման ամսաթիվը և հերթական համարը, Պատվո մեդալի հերթական համարը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար- գլխավոր քարտուղար **Հրայր Թովմասյան**